ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանի՝ Շվեդիայի Թագավորություն (Լունդ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Աննա Վարդապետյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Շվեդիայի Թագավորություն (Լունդ), 2019թ. մայիսի 6-ից 8-ը:

Հրավիրող կողմը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Լունդի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի կողմից համատեղ կազմակերպված՝ «Ժողովրդավարության վիճակը երկաթե վարագույրի անկումից երեսուն տարի անց» վերտառությամբ սեմինարին:

Քննարկված թեմաները՝ Կենտրոնական և Արևելյան եվրոպայի երկրներում Բարձրագույն դատական խորհուրդների և դատախազության դերը, միավորումներ կազմելու և հավաքների ազատության սահմանափակումները, էքստրեմիզմը՝ որպես հիմնարար իրավունքների սահմանափակման հիմնավորում, նախագահական և պառլամենտական կառավարման ձևերը, ազատ և արդար ընտրությունների սկզբունքները, սահմանադրական դատարանի դերը իրավունքի գերակայության շրջանակում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այս սեմինարը 2000 թվականին Վենետիկի հանձնաժողովի և Լունդի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի կողմից համատեղ կազմակերպված՝ «Ժողովրդավարությունն անցումային հասարակությունում» վերտառությամբ

սեմինարի երկրորդ փուլն է: Սեմինարի նպատակը՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարության մարտահրավերների քննարկումն էր: Մասնակցում էին Վենետիկի հանձնաժողովի գործող և նախկին անդամներ: Հրավիրված էին Շվեդիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ, գիտնականներ, դեսպաններ:

Սեմինարը բաղկացած էր երեք նստաշրջանից, որոնցից առաջինը նվիրված էր իրավունքի գերակայության հարցերին, երկրորդը՝ հիմնարար իրավունքների հարցերին, երրորդը՝ ժողովրդավարության հարցերին:

Իրավունքի գերակայության հարցերին նվիրված նստաշրջանի ընթացքում քննարկվել են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում Բարձրագույն դատական խորհուրդների և դատախազության դերը:

Հիմնարար իրավունքների հարցերին նվիրված նստաշրջանի ընթացքում քննարկվել են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում միավորումներ կազմելու և հավաքների սահմանափակումները, էքստրեմիզմը՝ որպես հիմնարար իրավունքների սահմանափակման հիմնավորում:

Ժողովրդավարության հարցերին նվիրված նստաշրջանի ընթացքում քննարկվել են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ազատ և արդար ընտրությունների սկզբունքները, սահմանադրական դատարանի դերը իրավունքի գերակայության շրջանակում, ինչպես նաև Հայաստանի՝ նախագահական կառավարման ձևից պառլամենտականի անցումը:

Բոլոր նստաշրջանների ընթացքում զեկուցմամբ հանդես են եկել Վենետիկի հանձնաժողովի նախկին կամ գործող անդամները Լեհաստանից, Իռլանդիայից, Բելգիայից, Չեխիայից, Շվեդիայից, Ֆրանսիայից, Էստոնիայից, Իտալիայից և Հայաստանից: Հայաստանից զեկուցումով հանդես է եկել Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի ղեկավար, Վենետիկի հանձնաժողովում փոխարինող անդամ Վարդան Պողոսյանը: Զեկուցման

թեման «Նախագահական կառավարման ձևից պառլամենտականի անցումը. Հայաստանի ներկա վիճակն ու զարգացման ուղղությունները Արևելյան Եվրոպայում»:

X _____

ANNA VARDAPETYAN

Հարգանքով՝

Աննա Վարդապետյան

13.05.2019թ.